

եւ 1386ի օրինակաց վենետկոյ՝ «Կանոն հոգեհանգիստ առնել կամ պատարագ մեռելոյ»։ Ասոցմէ «հոգեհանգիստ» կոչումը կը գտնենք նաեւ Շնորհաւուոյն (Ընդհ. 156), Որբելեանի (361) եւ Տաթեւացւոյն քով (Հրց. 362)։ Իսկ հին ու նոր մատենագիրք փոխանակ աղօր կը գործածեն ուրիշ հոմանշեր. Մանղակունին (179) եւ Եղիշէ (288-92) յիշատակ կ'ըսեն. Պարտաւայ ժողովն՝ ազապ ի հանգիստ, կամ յիշատակ վախճաներոցն, կամ միւրարուրիւն ոգոց (ԺԸ). Ղեւոնդ՝ հաց սոյ (152). Գր. Խլաթեցին՝ հաց հոգոյ (Հյպտ. 568). ուրիշներ կը կոչեն պատարագ կամ գոհ գեւնան (Արծ. 323), ու մատաղ (Ընդհ. 154. Ուռ. 404)։ Իսկ Որբելեանն ըսելով՝ թէ «զագարն ո՞ սահմանեաց, որ է հոգեհանգիստն» (ՀԿՃ. Ժ), կը հաստատէ ազա պիւն իւր ժամանակ ունեցած մասնաւոր եւ ամփոփ իմաստը։ Հին արձանագրաց մէջ կայ նաեւ սեղան, եւ յն. ազապիւն բառացի թարգմանութեամբ՝ սէր (աստ, 355)։

2. — Ծագումն եւ Հայոց մէջ։ — Բոլոր հին ազգերը, քաղաքակիրթ կամ վայրենի, կռապաշտ թէ աստուածապաշտ, սովոր էին ննջեցելոց ի նպաստ տալ այսպիսի ճաշեր, ինչպէս մանրամասնօրէն կը